ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ

ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«20» հոկտեմբերի 2018 թվականի № 95-Ն

«ՏԱՊԻ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ի և 3-րդ կետերով և հիմք ընդունելով 2018 թվականի հուլիսի 18-ին կայացած վարչական վարույթի արդյունքները.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Դադարեցնել «Տապի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ՀՀ Կոտայքի մարզի Գեղարդի բազալտի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը:
2. Ուժը կորցրած ճանաչել 2013 թվականի փետրվարի 6-ի օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/403 թույլտվությունը, լեռնահատկացման ԼՎ-403 ակտը և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-403 պայմանագիրը:
3. Ընդերքի գործակալության պետին՝
1) 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.
2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:
4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումն՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:
5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հուլիսի 4-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ